ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. մայիսի 26-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար Ռ.Պետրոսյանի գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Ռոմանոս Պետրոսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Ռուսաստանի Դաշնություն Սանկտ Պետերբուրգ,

2021թ. մայիսի 26-ից 28-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ռուսաստանի Դաշնության նախագահի խորհրդական, Նայան միջազգային բնապահպանական 9-րդ համաժողովի կազմկոմիտեի գործադիր քարտուղար

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝ Նայան միջազգային բնապահպանական 9-րդ համաժողովին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացել է «Երկրի էկոլոգիա՝ կայուն զարգացում» խորագրով Նայան միջազգային բնապահպանական 9-րդ համաժողովը (Невский международный экологический конгресс):

Համաժողովն անցկացվում է ՌԴ բնական պաշարների և շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ Դաշնային խորհրդի ենթակայության ներքո, ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի մասնակցությամբ: 2008 թվականից անցկացվող համաժողովը տարիների ընթացքում ձեռք է բերել բարձր հեղինակություն և դարձել բնապահպանության ոլորտի միջազգային մակարդակի

ծանրակշիռ հարթակ՝ ընդունված երկրների կառավարությունների, խորհրդարանների, գործարար ու գիտական շրջանակների կողմից:

Տասնյակ երկրների կառավարությունների ու խորհրդարանների բարձրաստիճան պաշտոնյաների, գիտնական-փորձագետների և առաջատար միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ, այդ թվում նաև կլոր սեղանների ձևաչափով, քննարկվել են հետևյալ հարցերը.

1. ջրային ու անտառային ռեսուրսների ինտեգրված կառավարում,
2. բնապահպանական կրթություն և էկոտուրիզմ,
3. շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ազգային ռազմավարությունների և նախագծերի ոլորտում փորձի փոխանակում,
4. գետեր առանց սահմանների. ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում,
5. անտառային ռեսուրսներ,
6. բնապահպանական անվտանգություն. այսօրվա մարտահրավերներն ու լուծումները,
7. բնական ռեսուրսների պահպանության և օգտագործման օրենսդրության կատարելագործում, էկոհամակարգերի պահպանությանն ուղղված միասնական մոտեցումներ,
8. անդրադարձ է կատարվել կլիմայական օրակարգին, կլիմայի նոր քաղաքականությանը, «կանաչ» էներգետիկային, շրջանաձև տնտեսության զարգացման ժամանակակից մարտահրավերներին:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Մայիսի 27-ին կայացած «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ազգային ռազմավարություններ և նախագծեր. փորձի փոխանակում» խորագրով կլոր սեղանի շուրջ և մայիսի 28-ին համաժողովի լիագումար նիստին հանդես եմ եկել ելույթներով (կցվում են):

Հանդիպումների ընթացքում ներկայացրել եմ ՀՀ կառավարության դիրքորոշումը շրջակա միջավայրի պահպանության ռազմավարության, բնապահպանական խնդիրների հաղթահարման առաջնահերթությունների, ոլորտի ձեռքբերումների և հետագա գործողությունների վերաբերյալ՝ մասնավորապես նշել եմ, որ ՀՀ բնապահպանության ոլորտի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և դրանց ռացիոնալ օգտագործմանը՝ սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հավասարակշռման սկզբունքի պահպանությամբ:

Օգտագործելով բարձր մակարդակի այս հարթակն ու լսարանը, համաժողովի լիագումար նիստի ժամանակ, որին մասնակցում էին տարբեր երկրներից շուրջ 800 մասնակից, միջազգային հանրության ուշադրությունը ևս մեկ անգամ հրավիրել եմ 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքներին: Անդրադարձ կատարելով 44-օրյա պատերազմի օրերին Արցախի ժողովրդի դեմ ռազմական հանցագործություններին, կիրառված արգելված զինատեսակների հետևանքով առաջացած հումանիտար և բնապահպանական ճգնաժամին:

<u>8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները.</u>

Մայիսի 27-ին երկկողմ աշխատանքային հանդիպում եմ ունեցել ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարար Ալեքսանդր Կոզլովի հետ: Հայկական կողմից հանդիպմանը մասնակցել է նաև Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոսի խորհրդական Վ. Սարգսյանը: Ողջունելով ռուս գործընկերներին հույս եմ հայտնել, որ այս հանդիպումը նոր խթան կհաղորդի երկկողմ համագործակցությանը և կօգնի լուծել բնապահպանության ոլորտի կոնկրետ խնդիրներ՝ նպաստելով բնական պաշարների խնայողաբար օգտագործմանը՝ դրական անդրադառնալով ընդհանուր տարածաշրջանի բնապահպանական խնդիրների լուծման վրա: Մատնանշվել է, որ հայաստանում բնապահպանության ոլորտի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա

միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և դրանց ռացիոնալ օգտագործմանը ՝ սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հավասարակշռման սկզբունքի պահպանությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարարության միջև համագործակցությունը և, այդ համատեքստում, քննարկել երկկողմ ծրագրին առնչվող հարցեր: Շնորհակալություն եմ հայտնել ՌԴ կառավարությանը՝ Ռուսաստան-ՄԱԶԾ զարգացման համագործակցության հիմնադրամի շրջանակներում իրականացվող «Կլիմայի փոփոխությանը Հայաստանի կայունության բարձրացում՝ Հայաստանի հիդրոօդերևութաբանական ծառայության արդիականացման միջոցով» ծրագրի ֆինանսավորման համար: ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարար Ալեքսանդր Կոզլովի հետ համաձայնություն է ձեռք բերվել ծրագրի շարունակականության՝ երկրորդ փուլի իրականացման գործում:

Անդրադարձ է կատարվել նաև անտառկառավարման ոլորտին: Ռուս գործընկերներին եմ ներկայացրել «10 մլն ծառ» նախաձեռնությունը և դրա շրջանակում Հայաստանի անտառածածկ տարածքներն ընդլայնելու հավակնոտ ծրագրերը: Նախաձեռնության շրջանակում համապատասխան գրություն է ուղարկվել նաև ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարարություն՝ ակնկալելով աջակցություն տնկիների տրամադրման հարցում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ռուսական կողմը «10 մլն ծառ» նախաձեռնության շրջանակներում հայկական կողմին կտրամադրի էնդեմիկ ծառատեսակների որոշակի խմբաքանակ:

Օգտվելով հնարավորությունից, երկու կողմերի փոխգործակցության և համատեղ իրականացվող ծրագրերի հետագա զարգացման համատեքստում, ևս մեկ անգամ վերահաստատել եմ հրավերս՝ ուղղված ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարարի Հայաստան այցելության հետ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ նախարար Կոզլովը Հայաստան կայցելի 2021 թվականի աշնանը, որի ընթացքում նախատեսվում է ստորագրել 2016 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի

Հանրապետության բնապահպանության նախարարության և Ռուսաստանի Դաշնության բնական ռեսուրսների ու էկոլոգիայի նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին» հուշագրի դրույթների իրականացման գործողությունների ծրագիրը:

ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարարի առաջարկությամբ քննարկվել է նաև ԵԱՏՄ շրջանակներում պլաստիկի օգտագործման սահմանափակման ծրագրի մշակման հետ կապված հարցեր: Այս համատեքստում կարևորվել է դժվար վերամշակվող թափոնների շրջանառությունից դուրսբերման ծրագրերի շրջանակում Հայաստանում մեկնարկած միանգամյա օգտագործման պլաստիկ տոպրակների և տարաների օգտագործման փուլային արգելքի գործընթացը:

Հանդիպման ավարտին ՌԴ բնական պաշարների և էկոլոգիայի նախարարին ի հիշատակ և որպես երախտիք նվիրել եմ «Կովկասյան ընձառյուծի» արծաթե հուշադրամ և Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքի օրինակ:

Շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար

Recoverable Signature

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

Ռոմանոս Պետրոսյան